

Քիւ 26162
Դեկտեմբեր 18, 1978

Մեծայարգ
Տիար Սուրէն Էվրան
Ասենապետ Եկեղեցւոյ Շինութեան Յանձնախումբի
Սրբապօրոյի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ
Թորոնթօ.

Յարգելի Տիար Էվրան,

Ստացած ենք Նոյեմբեր 28, 1978 թուակիր ձեր նամակը, որով
կը յայտնէք թէ Թորոնթոյի մէջ կազմուելիք Երկրորդ Ծուխին
համար մեր նշանակած Եկեղեցւոյ Շինութեան Յանձնախումբի տաս-
նըմէկ անդամներէն երեքը --Տիար Ժիրայր Թորիկեան, Նիքոն
Խոթանապուլեան եւ Արթին Գաւուր-- կը ինդրեն այս պարտակա-
նութենէն ազատ արձակուիլ :

Եթէ կարենաք վերոյիշեալ ազգայիններուն կրկին դիմել եւ
զանոնք համոցել որ ստանձնեն ազգային այս ծառայութիւնը՝ ու-
րախ կ'ըլլանք: Եթէ ոչ, համեցէք մնացեալ անդամները ժողովի
հրաւիրել եւ կազմակերպել ձեզի վստահուած աշխատանքները:

Եթէ պատահի որ մնացեալ անդամներէն ոեւէ մէկը յարգելի
պատճառով մը չկարենայ շարունակել իր ծառայութիւնը, հաճե-
ցէք հետեւեալ ազգայիններէն մէկը հրաւիրել իբրեւ անդամ
Յանձնախումբին մէջ գործելու --Տիար Անդրանիկ Զարբեան,
Մարտիկ Շէքիմեան, Լեւոն Չէօմլէրեան եւ Ժան Ֆէնէրժեան--:

Ինչպէս յայտնած էինք ձեզի Նոյեմբեր 10, 1978 թուակիր
մեր նամակով, Եկեղեցւոյ Շինութեան Յանձնախումբին պարտա-
կանութիւնն է ձեր ասենապետութեամբ կատարել հետեւեալ գոր-
ծերը.

1. Յտոնել եւ զանել յարմար վայրը եւ կալուած մը Սրբապօ-
րոյի շրջանակին մէջ, Սվաբապօրոյի Հայց. Առաքելական Եկեղե-
ցիի անունով հաստատուելիք մեր համայնքին համար:

2. Օրինական միջոցներով արձանագրել տալ, ինքօրփօրէյթ ընել, մեր երկրորդ համայնքը, իբրեւ Աքարպօրոյի Հայց. Առաքելական Եկեղեցի, մինչեւ նոր եկեղեցւոյ օծումը եւ անանակոչումը: (The Armenian Apostolic Church of Scarborough.)

3. Կազմակերպել նուիրահաւարութեան գործը, եւ ապահովել անհրաժեշտ նիւթականը, հոգալու համար գնուելիք կալուածին եւ Եկեղեցւոյ շինութեան ծախքերը:

4. Յնոր տնօրինութիւն, այս Յանձնախումբին նախագահ կը նշանակենք Առաջնորդի Պոխանորդ Հոգ. Տ. Յուսիկ Ե. Վրդ. Պաղասեանը, որուն հետ թղթակցութեան մէջ պարտիք զանուիլ: Պոխանորդ Հայր Սուրբին պէտք է ղրկուին Յանձնախումբիդ արձանագրութիւններու եւ թղթակցութեանց օրինակները, եւ իր ստորագրութիւնը պէտք է կրեն Առաջնորդին, Թեմական Խորհուրդին ուղղուած եւ այլ պաշտօնական գրութիւնները եւ յայտարարութիւնները:

Նկատի առնելով ձեր մտահոգութիւնը աւելի գործակիցներ ունենալու, կը յանձնարարենք որ նոյն ատեն դուք նշանակէք զանագան ենթայանձնախումբեր եւ հրաւիրէք պարոններ եւ տիկիներ եւ երիտասարդներ սանձնելու տարբեր պաշտօններ եւ պատասխանատուութիւններ:

Բացի նուիրահաւարութեան եւ յարմար վայր ու կալուած զրանելու համար նշանակուելիք ենթայանձնախումբերէն, կրնաք կազմել Տիկնանց Օժանդակ Յանձնախումբ, Տէր եւ Տիկին Զոյգերու Յանձնախումբ, Կիրակնօրեայ Դպրոցի եւ Հայ Դպրոցի Ուսուցիչներու Յանձնախումբ, Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան Յանձնախումբ եւ Դպրաց Դասի Յանձնախումբ:

Օրինական Խորհուրդ նշանակել եւ պաշտամունքներու կարգադրութիւններ ընել Տիրոջ կամբով կարելի պիտի ըլլայ շուտով կատարել: Այդ ընելու համար պէտք է մեր թեմի Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն տրատու անդամ արձանագրել 18 տարեկանէն վեր անձեր՝ որոնք մկրտուած եւ դրոշմուած են ըստ Հայց. Եկեղեցւոյ կանոնաց, եւ իրենց տարեաւորը վճարած են: Տարեաւոր կարելի է սահմանել իւրաքանչիւր անձի համար տարեկան 52 -- յիսուսնեքիւ -- տուար, շաբաթը մէկ տուար հաշիւով:

Եթէ Եկեղեցւոյ Երնութեան Յանձնախումբը կը խորհի թէ իրեն տրուած պատասխանատուութիւններէն զատ կրնայ կամ կը կամենայ զբաղիլ տրատու անդամներ արձանագրելու գործով, ձեզի արտօնութիւն կու տանք այդ աշխատանքին եւս ձեռնարկելու:

Կը ներփակենք օրինակ մը անդամագրութեան ընածելի մը որ պէտք է ստորագրել տար իւրաքանչիւր անձի որ կը փոփաքի տըրատու անդամ դառնալ Սքարպօրոյի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մեր համայնքին:

Սքարպօրոյի Հայց. Առաքելական Եկեղեցին ինքօրփօրէյթ ընելու օրինական թուղթերը համեցէք պատրաստել տալ եւ մեզի դրկել վաւերացման համար:

Վերոյիշեալ բազմազան աշխատանքներուն մէջէն կարելորագոյնը առաջին երեք կէտերն են՝ որոնց հետապնդումը պէտք է անյապաղ կատարել: Մօտիկ ձպագային կը յուսանք անձնապէս եւս ձեզի հետ ըլլալ, նկատի առնելու համար Յանձնախումբիդ ըարի գործերուն գնահատելի արդիւնքը:

Ձեզի եւ ձեր գործակիցներուն կը մաղթենք Ետրհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ, աղօթելով որ Աստուծոյ օրհնութիւնը անպակաս մնայ ձեր բոլորին վրայէն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Յ.Գ. Ձեզի կը դրկենք օրինակներ հետեւեալ գրութեանց.

1. Թեմական Կանոնադրութիւն
2. Manual for Parishioners
3. How To Address The Clergy

Օրինակ՝ Առաջնորդի Օղիանորդ Հոգ2. Տ. Յուսիկ Ծ. Վրդ.
Պաղատեսանի